ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԳՐԻ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՄՐԱՇՐՋԱՆԱԿԻ ԱՆՁՆԱԳՐԻ) ԵՎ ԻՆՔՆԱԳՆԱՑ ՄԵՔԵՆԱՅԻ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» համաձայնագրին միանալու մասին արձանագրությունը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2018թ. հունիսի 23-ին: Այն հնարավորություն է տալիս ԵԱՏՄ անդամ երկրների տարածքում ստեղծել պայմաններ տրանսպորտային միջոցների և ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների ազատ տեղաշարժի և դրանց էլեկտրոնային անձնագրերի ձևակերպման կարգի մասին:

Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրումը և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպումը հնարավորություն է տալիս ունենալ տեղեկատվական միասնական դաշտ, տեղեկատվության հասանելիության միասնական պայմաններ, այդ տեղեկատվության ամբողջականության պահպանման կենտրոնացված համակարգ, ինչպես նաև այդ տվյալների ստուգման ու մշտադիտարկման հավասար հնարավորություններ ու տրանսպորտային միջոցների էլեկտրոնային անձնագրերի տրամադրման ու ձևակերպման միանման համակարգ:

Հարկ է նշել, որ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ին կնքված համաձայնագիրը Ղազախստանի Հանրապետության կողմից վավերացվել է հետևյալ բովանդակությամբ վերապահումով.

«Действие настоящего Соглашения не распространяется на транспортные средства, самоходные машины и другие виды техники Вооруженных Сил, других войск и воинских формирований Республики Казахстан и транспортные средства специальных государственных органов Республики Казахстан».

Արձանագրության ստորագրման նախապատրաստման փուլում իրավասու մարմին հանդիսացել է ՀՀ ոստիկանությունը, որը ՀՀ շահագրգիռ մարմինների հետ

քննարկելով ղազախական կողմի վերապահումը՝ առաջարկել է Հայաստանի Հանրապետության կողմից Արձանագրությունը նույնպես վավերացնել հետևյալ բովանդակությամբ վերապահումով.

«Սույն Համաձայնագրի ազդեցությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի, այլ զորքերի տրանսպորտային միջոցների, ինքնագնաց մեքենաների և տեխնիկայի այլ տեսակների և հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների վրա:»:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ՀՀ վարած արտաքին քաղաքականության տեսանկյունից՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի անձնագրի) և ինքնագնաց մեքենայի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձևերի ներդրման և էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը նպատակահարմար է վավերացնել վերը նշված վերապահումով:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**